Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ *30.12.2021թ. ժամը 15.00*

Գեղարքունիքի մարզի խորհրդի նիստը նախագահում էր Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 9 անդամներից 6-ը:

Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին մարզի իրվապահ մարմինների ներկայացուցիչները, մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները, մարզպետի օգնականներ Մանանա Գալստյանը և Ջանիկ Բազեյանը, «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանը:

Օրակարգում՝

1. 2021 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին:
   /Զեկ. Արմեն Զոհրաբյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում կորոնավիրուսային հիվանդության տարածման դեմ իրականացվող աշխատանքների ու պատվաստումների ընթացքի մասին:
   /Զեկ. Լուսինե Վարդանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նոր ձևավորված համայնքների առաջիկա գործառույթների վերաբերյալ:
   /Զեկ.Վանիկ Հարությունյան - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

5. Այլ հարցեր:

Ելույթով հանդես եկավ՝
Սուլիկո Շուշանյանը - Շողակաթ համայնքի ղեկավար

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2021 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ կուտակված պարտքերը մարելու և 2022 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/՝ ըստ համամասնությունների հավաքագրման համար.

2) գնումների գործընթացը կազմակերպելու համար համայնքապետարաններում ստեղծել գնումների պատասխանատու ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնել շինարարական, տեխնիկական աշխատանքներ, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ մատուցող ընկերությունների նկատմամբ՝ համայնքներում իրականացվող շինարարական ծրագրերի որակն ապահովելու համար:

3) աշխատանքներ տանել համայնքապետարանների, ՀՈԱԿ-ների, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատողների և ազգաբնակչության շրջանում կորոնավիրուսի տարածման դեմ պատվաստումներն իրականացնելու համար.

4) համայնքապետարանների հաստիքացուցակներում համայնքների բնակավայրերի օպերատորներին ընդգրկել որպես համայնքային ծառայողներ.

5) «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ ճշտել համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ պարկի տարածքից վարձակալության տրամադրված հողամասերի վարձավճարների չափը և աշխատանքներ տանել այդ վարձավճաների ու գոյացած ապառքների 30 տոկոսը ՀՀ օրենքով սահմանված կարգով համայնքներին փոխանցելու համար:

2. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Սևան և Վարդենիս համայնքների ղեկավարներին՝ գույքագրումը և հանձնաընդունելությունը սահուն կազմակերպելու համար համագործակցել համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումից առաջ գործող համայնքների ղեկավարների հետ:

04.01.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ